**Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր N ՀՀԿԳՄՍՆՄԱԾՁԲ-20/38-Հ1**
**ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ**
**N ՀՀԿԳՄՍՆՄԱԾՁԲ-20/38 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ**
**ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ք. Երևան «15», «ապրիլ», 2021 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի տեղակալ՝ Վահրամ Գասպարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Հիդրոգազշիննախագիծ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ս. Քոչարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, (երկուսը միասին այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով 2020 թվականի օգոստոսի 10-ին կնքված թիվ ՀՀԿԳՄՍՆՄԱԾՁԲ-20/38 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 կետը՝ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Առաջնորդվելով ՀՀ կառավարության 2021 թ. մարտի 25-ի թիվ 397-Ն որոշման 4-րդ կետի 1-ին ենթակետով՝ Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները.

1.1.1 Հաստատել Պայմանագրով սահմանված ծառայությունների մատուցման նոր Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը համաձայն թիվ 1 հավելվածի:

1.1.2 Հաստատել Պայմանագրով նախատեսված ծառայությունների դիմաց վճարման նոր ժամանակացույցը համաձայն թիվ 2 հավելվածի:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև պարտավորությունների լրիվ կատարումը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, ծառայությունների հանձնման-ընդունման հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Սույն համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի թիվ 1 և 2 հավելվածները համարվում են համաձայնագրի անբաժանելի մասը:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ և ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ | Կ Ա Տ Ա Ր Ո Ղ |
|---|---|
| ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն<br>Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3 Կառավարական տուն 2,<br>ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն<br>Հ/Հ 900011027969<br>ՀՎՀՀ 02698732 | «Հիդրոգազշիննախագիծ» ՍՊԸ<br>Հասցեն՝ ՀՀ Լոռու մարզ, ք. Վանաձոր, Տարոն 4, Բելոռուսական 10/4,<br>Հեռ.՝ (055) 07-02-95<br>Էլ. փոստ՝ hidrogaz@mail.ru<br>«Ինեկոբանկ» ՓԲԸ,<br>Հ/Հ 2050222074971001,<br>ՀՎՀՀ 06943674 |
| Գլխավոր քարտուղարի տեղակալ՝<br>------------------------------- Վ. Գասպարյան<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. | Տնօրեն՝<br>------------------------------- Ն. Քոչարյան<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. |

*Հավելված թիվ 1*
*« 15 » , « ապրիլ», 2021 թ. կնքված*
*N ՀՀԿԳՄՍՆՄԱԾՁԲ-20/38-Հ1 համաձայնագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Ծառայության | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Չափա-բաժնի համարը | Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | Անվանումը | Տեխնիկական բնութագիրը | Չափման միավորը | Ընդհանուր գինը ՀՀ դրամ, | Ընդհանուր քանակը | Մատուցման | |
| | | | | | | | **հասցեն** | ժամկետը |
| 1 | 98111140/6 | հեղինակային հսկողության ծառայություններ | «Ալավերդու պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի ջեռուցման համակարգի անցկացման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություններ | դրամ | 57050 | 1 | ՀՀ Լոռու մարզ, ք. Ալավերդի, Սանահին Սարահարթ թաղամաս, 3/6ա շենք | Կրթական օբյեկտի հիմնանորոգման աշխատանքներին զուգահեռ, մինչև 2021թ սեպտեմբերի 1-ը ներառյալ: |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

_________________ Վ. Գասպարյան
(ստորագրություն)
Կ.Տ

02698732

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

_________________ Ն. Քոչարյան
(ստորագրություն)
Կ.Տ

*Հավելված թիվ 2*
*« 15 » , « ապրիլ» , 2020 թ. կնքված*
*N ՀՀԿԳՄՍՆՄԱԾՁԲ-20/38-Հ1 համաձայնագրի*

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Չափաբաժնի համարը | Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | Անվանումը | Դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թթ.-ին, ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | |
| | | | Հունվար | Փետրվար | Մարտ | Ապրիլ | Մայիս | Հունիս | Հուլիս | Օգոստոս | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 98111140/6 | հեղինակային հսկողության ծառայություններ | | | | 57050 | 57050 | 57050 | 57050 | 57050 | 57050 | 57050 | 57050 | 57050 | 57050 |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| _______ Վ. Գասպարյան | _______ Ն. Քոչարյան |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ | Կ.Տ |